նշանավոր գրքեր, որոնք մեր միջնադարյան գրքի պատմության մեջ վերին աստիճանի հաղվագյուտ գործեր են։ Դրանցից առաջինը Քեմախի Ավագ վանքում 1201 թվին գրված ավետարանն է, երկրորդը՝ Մշու Առաքելոց վանքի (Ս. Ղազար) 1202 թվին գրված մեծ Տօնականը (Ճառընտիրը)։ Առաջինը, որ ներկայումս գտնվում է Փարիզում, մասնավոր ձեռքերում, արժանացել է եվրոպացի գիտնականների առանձին ուշադրության, այդ գրքի զարդանկարների մեջ մասնագետները գտել են հայկական հին գորգերի ծաղկանկարների մեծ նմանություն...»[77]։ Բազմաթիվ են այդպիսի գորգեր հիշեցնող ծաղկանկարները նաև Մշո Տօնականի գլխազարդ կիսախորաններում։ Ինչ իմանալին, որ այդ երկու նշանավոր ձեռագրերը ստեղծվել են միևնույն վանքում և զարդարողը նույն մարդն է եղել, հայ միջնադարյան մանրանկարչության տաղանդավոր վարպետներից մեկը (տե՛ս նկ. 2, 3)։

Է

Իր վիթխարիության հետ միասին Տօնականը նշանավոր է նաև ձեռագրագիտական տեսակետից։ Արդեն 12-րդ դարում խոշոր ձեռագրերը նախընտրում էին գրել թղթի վրա և բոլորգրով. դյուրամատչելի էր և՛ գրանյութը և՛ գիրը։ Հարևան ս. Գրիգոր Լուսավորչի վանքում, այդ ժամանակ Հովհաննես և Ղազար գրիչները թղթի վրա բոլորգրով նույնիսկ ավետարան էին ընդօրինակում։ Դեռ ավելին, Ղազար վարդապետը իր ավետարանը սովորականից փոքր չափերով էր գրում. «գրեցաւ սա փոքրագոյն հասակաւ, վասն դիւրաբարձիկ լինելոյ, ի շրջապտոյտ և ի խռովասէր ժամանակիս և ի դառն դիպող աւուրցս բերմանց»[78]։

Այդ բանը Վարդան գրիչին չէր անհանգստացնում, որովհետև ստացող պարոն Աստուածատուրը կամեցել էր, որ իր Տօնականը գրվի ոչ թե «փոքրագոյն հասակաւ, դիւրաբարձիկ լինելոյ» համար, այլ լինի հսկայածավալ մի մատյան և պարունակությամբ լինի ավելին, քան նրան հայտնի Տօնականները։ Բացի այդ Ավագ վանքի գրչության դպրոցում ընդունված գիրը ուղղագիծ երկաթագիրն էր, ինչպես երևում է տեղի Վարդան և Ստեփանոս գրչի ընդօրինակություններից։ Ձեռագիրն ստեղծելու գործում խոշոր է ստացողի դերը։ Նա ձեռագրի միայն նյութական կողմը չէր ապահովում, այլև՝ թելադրում չափը, նյութի և գրի տեսակը, նկարազարդելու և կազմելու որակը և այլն։ Վերոհիշյալ Ղազար վարդապետ գրիչը վերևում հանդես է գալիս որպես ստացող, որովհետև նա իր համար էր ընդօրինակում և մտահոգվում իր ստացած ձեռագրի ճակատագրով։ Այս ընդգծում ենք այն պատճառով, որ երբեմն գրի կամ նյութի գործածության ժամանակը որոշելիս հաշվի չեն առնվում ստացողի, գրչի ցանկությունները, նրանց հնարավորություններն ու կարողությունները։ Մշո Տօնականի ստեղծման մեջ գրչի կարողություններին հավասար վճռական է ստացող պատրոն Աստվածատուրի դերը, որը ոչինչ չի խնայել պատկառելի մեծությամբ հոյակապ ձեռագրական մի հուշարձան ստեղծելու համար։ Պատրոն Աստվածատուրին չվիճակվեց տեսնել իր գանձն ավարտված։ Ձեռագրի հիշատակարանը չգրվեց, ձեռագիրը չկազմվեց։ Պատճառը անշուշտ Սեբաստիայի սուլթանի արշավանքն էր դեպի Կարին, որի ճանապարհն անցնում էր

77 Գ. Լևոնյան. Հայ գիրքը..., էջ 29—30։
78 Յիշատակարանք, Ա, էջ 687։